ARMENIAN NATIONAL PLATFORM
EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

CEPA

7-ը հունիսի, 2023թ., Երեւան
Եվրասիա համագործակցություն հիմնադրամի
տնօրեն Գեւորգ Տեր-Գաբրիելյանին

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հարգելի պարոն Տեր-Գաբրիելյան

Քաղաքացիական հասարակության դաշտում գործող դրամաշնորհատուների գործունեության գլխավոր սկզբունքներից մեկը թափանցիկությունն ու հաշվետվողականությունն է: Դա նաեւ կանխարգելիչ միջոց է հնարավոր շահերի բախումներից, կոռուպցիայից եւ կուսակցականացումից խուսափելու համար: Իրենց գործունեության թափանցիկություն ապահովում են անգամ այնպիսի դրամաշնորհատու կազմակերպություններ, որոնք թիրախավորվում են Հայաստանում առկա այլատյաց եւ/կամ ռուսաստանյան ազդեցության տակ գտնվող անձանց եւ կառույցների կողմից: Այդ իմաստով մեր տարակուսանքն է հարցուցում այն հանգամանքը, որ չլինելով թիրախավորված նման կառույցների կողմից՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամը չի հրապարակում/ տեղադրում իր կայքում իր ստացած եւ բաշխած միջոցների մասին տեղեկությունները:

Խնդրում ենք մեզ տրամադրել, կամ հրապարակել.

1. Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից վերջին 10 տարիների ընթացքում ֆինանսավորում ստացած բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց ցանկը՝ ըստ տարիների, նշելով այն ծրագրերը, որոնց շրջանակներում այդ ֆինանսավորումը իրականացվել է եւ տրամադրած ֆինանսավորումների/դրամաշնորհների չափը:
2. Եվրասիա համագործակցություն հիմնադրամին վերջին 10 տարիների ընթացքում ֆինանսավորում տրամադրած դրամաշնորհատուների/նվիրատուների ցանկը, նրանց տրամադրած գումարի չափը եւ այն ծրագրերի անվանումները, որոնց շրջանակներում այդ ֆինանսավորումները տրամադրվել են:

Հարգանքով՝

Հովսեփ Խուրշուդյան,
ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային համակարգող,
ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ Քարտուղարություն ՀԿ խորհրդի նախագահ

Լուսինե Հակոբյան,
Եվրամիություն-Հայաստան քաղաքացիական
հասարակության պլատֆորմի համանախագահ

E-mails: hovsepkhurshudyan@gmail.com , lousinehhakobyan@hotmail.com
Web Site: www.eap-csf.am